ԼՅՈՒՍԻ ԹԱՐԳՅՈՒԼ

ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻ

891.99ա
Թ-33

ՊԵՏՀՐԱՏ

30 MAY 2011

891.99Մ
Թ-33
Ար

ԼՅՈՒՍԻ ԹԱՐԳՅՈՒԼ

ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻ

Նկարներ
Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

18 APR 2013

8665

ՎԻՄՈՑԱԼ

գ. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

1807
38

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1938

1

Զյունը գալիս եր փաթիլ-փաթիլ։ Զյունը դիզվում եր փաթիլ-փաթիլ։ Որորում եր, շորորում եր ու տակի, նստում Ֆնարիկի թշիկներին։ Որորում եր, շորորում եր ու տակի, նստում Ոհանիկի սուր քթիկին. Գոհարիկի գանգուրներին, Գուրգենիկի թաթիկներին։

Այնպես սպիտակ, այնպես գեղեցիկ եր ձմեռը։

Յերեխաներն ուրախացած խաղում եյին, ճերմակ արջուկների պես թավալ տալիս ձյան մեջ։

Վազվզելուց նրանց այտերն այնպես եյին կարմրել, վոր ճնճղուկները ծառի ճյուղից նայում եյին ու կարծես ասում.

Ծիվ-ծիվ-ծիվ-ծիվ... ինչ սիրուն եք. ես ինչ լավն եք...

Ռուբիկն առաջարկեց յերկաթուղի խաղալ։ Ընկերներն անմիջապես խմբվեցին։

— Դուք, Ոհան ու Գոհար, կլինեք շոգեկառք. յես մեքենավար, Կայծիկը սլաքա-

վար թող լինի,— հայտարարեց Ռուբիկը։

— Իսկ յես գլխավոր կայարանապետ կլինեմ — ընդհատեց Շուշիկը։

2

Բակում յեռում եր աշխատանքը։ Յերեխաները բաժանվել եյին բրիգադների։ Բահերով հարթում եյին ձյունը, կարգի գցում ճանապարհը։ Գոհարի գանգուրները գլխարկի տակից թափթփվել եյին քրտնած ճակատին, բայց նա մազերն ուղղելու ժամանակ չուներ... այո, այո, ժամանակ չուներ... բրիգադավար Ոհանը խստություն նկատողություն եր անում դանդաղ աշխատողներին։

— Ով հարվածային չլինի, նրան չենք պարգևատրի, ա՛յ — հիշեցնում եր նա։ Իսկ ինժեներ Ռուբիկն ասում եր։

— Ծուռ-մուռ չանցկացնեք գիծը. կայարանապետը չի սիրում վատ աշխատանք։

Յերեխաներից վոմանք այլ գործով եյին զբաղված։ Նրանք սահնակները կապկրպում եյին իրար, գծակառք դարձնում։

Յերկու-յերեք տարեկան Աչիկը, Ալիկը, Քաջիկը խաղալիքները գրկած, անհամբեր սպասում եյին, թե յե՞րբ գնացք կնստեն։

Յերբ ամեն ինչ պատրաստվեց, գծի պետ Աշոտն ասաց։

— Հիմա լինելու յե մանկական գնացքի հանդիսավոր բացումը։ Յերեխաներ,



խնդրում եմ տեղերը գրավել։ Դու, պուճուր Աչիկ, կլինես մամա, իսկ Շուշիկի տիկնիկը՝ քո յերեխան։ Ալիկ, դու նատիր շնիկիդ հետ, միայն թե զգուշացրու նրան, վոր

անկարգություն չանի, վագոնը չկեղտոտի... թե չէ, կտուգանեմ։ Քաջիկը Զարիկի հետ թող նստի, իսկ Նուշիկը չաղվիկ է, մենակ կնստի։

Յերեխաներն աշխուժացած նստեցին սահնակ-վագոնը։ Շոգեքարշ Ոհանն ու Գոհարը կցվեցին գնացքին։

Զին-զին-զին-զին, զանգը զարկին

զանգը զարկին։ Սլաքավար Կայծիկը ցույց տվեց կանաչ դրոշակը, գնացքը շարժվեց։

— Կու-կու-կու-կու։

— Կու-կու-կու-կու, սուրում եր գնացքը։

Նրա կողքով վազում եյին բակի շները։ Քրքջում եյին յերեխաները։

Ճանապարհը ձգվեց դառնիվեր։ Գնացքը դանդաղացրեց ընթացքը, մտավ կայարան։

— Ճիշտն ասած, յես հոգնեցի, — ձայնեց շոգեքարշ Գոհարը. — հարկավոր է հանգըստանալ։

3

— Մի քիչ համբերիր, շուտով կհասնենք յերջանիկ կայարանը. — խրախուսեց մեքենավարը։

— Զին-զին, զին-զին, զանգը զարկին, զանգը զարկին։ Յերեխաները, վոր իջել էին կայարանում զբոսնելու, նորից զբաղեցին իրենց տեղերը։ Գնացքը սուլեց, թռչաց, գոլորշի արձակեց։

Ճանապարհն այս անգամ ձգվում եր գայռիվայր։ Ոհանն ու Գոհարը հեշտությամբ եյին քաշում վագոնները։ Նրանք ուզում եյին շուտ հասնել գլխավոր կայարանապետի մոտ։ Մ՛յ, թե կուրախանար նա... այ թե լավ-լավ նվերներ կտար նա մանկական յերկաթուղի կառուցողներին։

Մեքենավար Ռուբիկն արագ-արագ պատացնում եր ղեկը։ Գնացքը սուրում եր արագ։

— Կու-կու-կու-կու։

Մեկ ել հանկարծ յերեխաները ճչացին։

Շունը հալչեց գազազած... մեքենավարը սարսափած դուրս թռավ իր տեղից։ Ու զինգայ հեռախոսը։

— Ալո... ալո... ընկեր կայարանապետն է. ընկեր կայարանապետն է հեռախոսի մոտ։

— Ջե-Է. յես եմ, Շուշիկը. — յեղավ պատասխանը։

— Սու... ուս, դու Շուշիկ չես, դու հի-

ժա կայարանապետ ես,— հիշեցրեց Ռուբիկը։— Ի՞նչ ես...

— Խոսում է կայարանապետը.— ընդհատեց Շուշիկը,— ի՞նչ է պատահել։

— Գնացքը խորտակվեց, ընկեր կայարանապետ,— շնչասպառ հայտարարեց Ռուբիկը.. — բայց յես չեմ մեղավոր, ազնիվ խոսք, սլաքավարն է մեղավոր... նա գծի վրա թողել եր ուրիշ սահնակ, մենք կպանք երար ու... ախր նա պիտի փակեր սեմաֆորը. չէ՞, ընկեր կայարանապետ։

— Իսկույն ինձ մոտ ուղարկել այդ անպիտան սլաքավարին,— խիստ հրամայեց կայարանապետը.— յես կպատժեմ նրան։ Սպասիր, մի բոպե սպասիր, զոհեր հո չկան։

— Կան. կան.— դառնացած պատասխանեց Ռուբիկը.— կոտրվել է շնիկի տոպիկը, տիկնիկի թեվիկը...

— Կանչիր շուտափույթ ոգնություն. նրանց հասցրու հիվանդանոց, կարգադրեց կայարանապետը. — սպասիր, մի բոպե սպասիր. ետ ռւմ տիկնիկի թեվն է կոտրվել։ Ռուբիկը շփոթված լռեց... կոտրվել եր Շուշիկի տիկնիկը. Շուշիկը հիմա կայարանապետ է, իսկ կայարանապետը հո տիկնիկ չի

խաղում, վոր նա ասեր — քո տիկնիկը...

— Ետ ռւմ տիկնիկի թեվն է կոտրվել.— յեկրորդ անգամ հարցրեց կայարանապետը։

— Քո... ընկեր կայարանապետ...

— Մայրիկ ջա՜ն, կո՜տրել է՜ն իմ տիկնիկի թեվիկը,— լաց յեղավ Շուշիկը, դեպի աղետի վայրը վազելով։

— Ընկեր կայարանապետը լաց չի լի-

նում, ամոթ է... դու մեզ խայտառակում ես.— նախատեցին ընկերները։

— Չե, յես հիմա ելի Շուշիկ եմ, յես կարող եմ լաց լինել... ավեք. ավեք իմ կոտրված տիկնիկը.— ավելի բարձր հեկեկաց նա,— վա՛յ, տիկնիկ Ջան, վա՛յ. անթեվ Ջան...

— Մենք նրան կուղարկենք հիվանդանոց, փայտի թեվիկ շինել կտանք,— մխիթարեցին ընկերները։

Գլխիկոր կանգնել եր սլաքավար Կայծիկը ու չեր համարձակվում նայել վոչ վոքի։ Նա իրեն այնպես հանցավոր եր զգում... Յեթե ուշադիր լիներ աշխատանքի ժամանակ, հո գնացքները չեյին կպչի իրար, հո

չեր կոտրվի շնիկի տոտիկը... լաց չեր լինի սիրելի Շուշիկը։

Իսկ ընկերները... ընկերներն ինչպես եյին նայում նրան։

Կայծիկը մոտեցավ Շուշիկին, հուզված թոթովեց։

Սրանից հետո այնպես կանեմ, վոր... վոր գնացքն ել ազատ չհանդիպի, վոր դու... դու ել չտխրես, հա՞-ա՞, Շուշիկ Ջան։

Շուշիկը սրբեց աչքերը. ասես ժպտաց արեվը։

1807
38

Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գլավլիտի լիազոր Կ—4643 Հրատ 4301
Գատվեր 1159 Տիրաժ 4000
Թուղթ 74×105 Տպագր 1/2 մամ.
Մեկ մամուլ 40460 նիշ Հեղինակ 1/2 մամուլ
Հանձնված է արտադրության 26 սեպտ 1937
Ստորագրված է տպագրության 3 դեկտ. 1937
Գինը 40 կ.

Ցերեվան, Պետհրատի Տպարան. Լենինի փող 65

-04

ՀՀ Ազգային գրադարան
NL0399545

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.
182
8665

ДЕТСКАЯ ЖЕЛЕЗНАЯ ДОРОГА

Гиз Арм. ССР. Ереван,